

File

Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto .6. Հոկտեմբեր 19.81.

Rec. Oct. 15/81

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Ս.Արք.Մանուկեան
Առաջնորդ
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրթ.

Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան 22 Սեպ.1978 թուակիր եւ 26016 թիւ Ս.Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին ուղղեալ նամակին համաձայն ՚՚իբրեւ սահման երկու ծուխերու Վիքթորիա Փարք Ավընիւ՚՚ն նշանակուած էր եւ ՚՚երկրորդ ծուխի սահմանը պիտի ըլլար այս գիծին Արեւելքը գտնուող մասը՚՚:

Հ.Բ.Ը.Մ.ի հողին մէկ մասին վրայ, վերջերս գտնուուած ցուցատախտակէ մը ի յայտ կու գայ, թէ այդ հողաշերտը Ս.Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ ապագայ վայրը պիտի ըլլայ:

Վերոյիշեալ հողամասը Ս.Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ յատկացուած սահմաններուն մէջ կը մնայ:


Ս.Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի այսօրուայ վարչութիւնը կամ այս հրահանգէն տեղեկութիւն չունի, կամ ալ գիտակցաբար կ'անտեսէ:


Այս բոլորը եթէ Առաջնորդարանի գիտակցութեամբ կը կատարուին, տրուած յարափոփոխ հրահանգներ գաղութատակն ու վրայ կ'ընեն, որով

սպասուած խաղաղութիւնը եւ անդորրութիւնը վերահաստատել կը դժուարանայ:

Ծխական Խորհուրդս, վերապահելով իր բոլոր օրինական իրաւունքները, Չերդ Սրբազնութենէն կը խնդրէ, որ վերոյիշեալ նամակով ղրկուած հրահանգը անմիջապէս Ս.Շրրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին յիշեցուի եւ մեզի ալ՝ Առաջնորդարանին այդ որոշման վրայ հաստատամտութիւնը տեղեկացուի:

Մատչիմք ի Համբոյր
Չերդ Սրբազնութեան Աջին
ի Դիմաց
Ծխական Խորհուրդի


Ղեւոնդ Շահմելիբեան
Ատենաղպիր


Արպէն Զիւրբճեան
Ատենապետ

Պատճէն

Հ. Բ. Ը. Մ.ի Թորոնթոյի Վարչութեան